



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔՐԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻԱ ՇԱԲԱԹ 11 ՓԵՏՐՈՒԱՐԻ 1861

ԹԻԻ 642

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶՄԻՌՆԻԱ, 11 ՓԵՏՐՈՒԱՐԻ

Լուրացոյն հասած ընտրեալ թէպէտեւ ընդ հանրապէս խաղաղասիրական են, այսու ամենայնիւ պատերազմի երկիւղը միշտ հաստատուն կը մնայ շատերուն սրտին մէջ: Սորոք է որ մեծ տէրութեանց պաշտօնական օրագրութիւնները կաշխատին ամեն կերպիւ ստրկացնելու հասարակութեան միտքը ի մասին խաղաղութեան անմիասն մնալուն, սակայն միւս կողմէն կը տեսնենք որ ամեն տէրութիւնները շարունակ զինուորական պատրաստութիւններ կը ընեն: Աստի եթէ խաղաղութիւնը վտանգի մէջ չգտնուիր, ինչ հարկ կայ այսպիսի պատերազմական պատրաստութեանց պարտաւիր: Արեւելեան թերթերը սրտիւ որ ներկայ քաղաքական ծանր դժուարութիւնները բարեկամօրէն լինեն, բայց ոչ որ կրնայ ուրանալ թէ այս դժուարութեանց մէջ պատերազմական սերմանք շատ կը տեսնուին, որոնք ուշ կամ շուտ պիտի ծինն պիտի դորանան:

Եւրոպիոյ նախորդ թագաւոր, Ֆրանսուա Երկրորդ, վերջապէս ստիպուեցաւ անձնատուր ըլլալու պայմաններ ընել Սարտենիոյ դժուար նակին հրամանատար Չիլտիմի դորապետին հետ՝ որ ամայի ջիւղ, ըստ հաստատեալ դաշնայն կայէթա քաղաքին ամեն բերդերուն տիրեց: Թագաւորը և թագաւորական գերդաստանը գողցուական շոգեհաւով մը մեկնեցան: Կայէթայի մէջ գտնուող բերդապահ զօրքը պատերազմի կարճաւոր պիտի մնան Սարտենիոյ դժուար ձեռքը մինչև որ Սիւնան յանձնուի այս տէրութեանը:

Հունգարիայի և Իլհաստանի մէջ ազգայնութեան և անկախութեան ոգին որ ըստ օրէ բոր

բոքելու վրայ է: Իտալացոյն յաջողութեամբ ձեռք բերած ազատութիւնը մեծ քաջակերութիւն տուաւ յիշեալ ժողովրդաց, որոց մէջ թէպէտեւ յայտնի ապստամբութիւն մը տակաւին երեան չեղաւ, սակայն տարակոյս չկայ թէ բարեպաշտեհ առթի մը կը սպասեն. և առայժմ կը բաւական սահմանադրական մեծամեծ ազատութիւններ պահանջել, մանաւանդ Հունգարացիները: Աստիոյ կայսրը յատուկ յայտարարութեամբ մը իմաց տուաւ այս ժողովրդեան որ, եթէ իւր շնորհած օրինաւոր զինուորներուն վրայ գոհ չըլլալով, ապօրինաւոր գործքերու ձեռք կը դարձնեն, պիտի ստիպուի զինուորաւորութեամբ զսպել անոնց անարժան ընթացքը:

Աստիոյ, Սիւնան և Բուսիան ամեն կերպ զգուշութեան միջոցները ի գործ դնելու վրայ են, որպէսզի պատրաստ գտնուին ամեն ապստամբական դէպքերուն որ կրնան տեղի ունենալ Հունգարիայի և Իլհաստանի մէջ:

Տարակոյս չկայ թէ Բուսիոյ թագաւոր Կիլյում Առաջին մեծ փառահաւան շուքի խաղաղութեան հաստատուն մնալուն վերայ. վստիկ ազգային երեսփոխանաց ժողովոյն առինքն ուղղած մէկ ատենախօսութեանը պատասխանելով, Եւրոպիոյ Ահապառութիւնը ըսաւ. «Կետք չեն ինքզինքնին, խաբենք և չտեսնենք որ կրնան նոյնքան գոյցէ ծանր և վտանգաւոր ժամանակներու. ուստի ամենահարկաւոր է որ կատարեալ համաձայնութիւն մի ըլլայ ի մէջ իմ և ազգային երեսփոխանաց: Այս համաձայնութիւնը կը յուսամ, կը փափագիմ և կը սպասեմ. վստիկ անով միայն զօրաւոր ըլլալով ներքուստ և արտաքուստ, ազահալութեամբ կարող պիտի ըլլամք դէմ դնել գալու գէպքերուն»:

Իտալական թերթակցոյն մէջ ազգային երեսփոխանաց ընտրութիւնը բարեկարգութեամբ և

յաջողութեամբ ի գործ կը դրուի: Սինչե ցոյ՝ սոր ընտրեալ երեսփոխանաց խիստ մեծագոյն մասը Սարտենիոյ կառավարութեան կուսակից և համամիտ անձինք են. ուստի յիշեալ կառավարութեան նախագահ Վալուր Կոմսին խոհեմ քաղաքականութիւնը երթալով պիտի դորանայ: Կը հաստատեն թէ յիշեալ տաղանդաւոր մեծ պաշտօնատարը իտալական ազգային ժողովրդու մարտերուն հետեւեալ երեք առաջարկութիւններով պիտի ընէ. նախ՝ 300 կամ 500 միլիոն ֆրանք փոխառութիւն մի ընել, երկրորդ՝ զՍիւնան-Իլհաստան վեհապետութեամբ թագաւոր Ստալիոյ հրատարակել, երրորդ՝ ամեն պահեստի զինուորները ի բանակ հրաւիրել, և չորրորդ՝ իտալական տէրութեան ամեն իշխանութիւնները թագաւորին ձեռքը յանձնել առանց ժամանակ սահմանելու: Եթէ այս առաջարկութիւնները ընդունուելու ըլլան, որոց վրայօք տարակոյս չկայ, Իտալիոյ գործքերը. Վալուր Կոմսին իմաստուն տնօրէնութեանց համեմատ, խոհեմ և հաստատուն ընթացքով մի պիտի յառաջանան և Վիեննայի վրայ յարձակումը պիտի ուղղուի ի նպատակ օգտից իտալական թերթակցոյն:

Ստերս խորհրդակցութիւն մի պիտի ըլլայ ի փարիզ ի մէջ զիւսեւոր տէրութեանց ի մասին Ստերսոյ գործոց, կամ լաւ ևս է ըսել քննելու և տեսնելու համար թէ արդեօք հարկաւոր է որ գաղղիացի զօրքը՝ ևս առաւել ժամանակ մնան Ստերսոյ մէջ: Բոտ հրամանի Ս. Պրան, օսմանեան գեպպանը ներկայ պիտի գըտնուի այս խորհրդակցութեան մէջ:

Սինչին Բրիտանիոյ կառավարութիւնը կը փափակ և կը պնդէ յօգուտ օսմանեան տէրութեան որ գաղղիացի զօրքը և ռուսական դաշնադրութեան համեմատ, Ստերսէն շուտով կը ընէ, ուր ապահովութիւնը որ ըստ օրէ հաստատուելու վրայ է, մարդասիրական գործունեայ ջանքեր վստիկ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՄԻՌՆԻԱ

Ս.Օ.Գ.ԸՅԵՒՆ

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՕՐՈՒՆԻՐ

(Շարունակութիւն և վերջին)

Թագին ընտրողները կ'ընտրեն թագական խորհրդին անդամները թագին ընտրողական ժողովին ներկայութեանը ըստ ընտրական օրինաց:

Սյնպէս կ'ըլլայ և գաւառներու մէջ ժողովականաց և խորհրդականաց ընտրութիւնը:

125. Ինչհանուր ժողովը հինգ տարին անգամ մը մարտի վերջը կը լուծվի և ապրիլի սկիզբը կը նորոգվի:

Կրօնական ու Քաղաքական ժողովներն ու տեսուչ խորհուրդները ամեն տարի մարտի վերջը կ'իտուլ չափ միայն կը լուծվին և ապրիլի սկիզբը կը նորոգվին:

Թագական ու Թեմական խորհուրդները չորս տարին անգամ մը մարտի վերջը կը լուծվին և ապրիլի սկիզբը կը նորոգվին:

Սյնպէս կ'ըլլայ և գաւառներու մէջ ժողովաց և խորհրդաց նորոգումը:

126. Ազգային երեսփոխաններն ու թագական և Թեմական խորհրդականները անմիջապէս վերընտրելի են նոյն պաշտօնին համար: Իսկ կրօնական ու քաղաքական ժողովաց և տեսուչ

խորհրդաց անդամները՝ որ անմիջապէս վերընտրելի չեն նոյն պաշտօնին համար, ուրիշօր և է պաշտօնի համար վերընտրելի են:

Սյնպէս է նաև գաւառներու մէջ գաւառական պաշտօնաւորաց վերընտրութիւնը:

127. Իմեն անգամ որ ազգային ժողովներն ու խորհուրդները նորոգվին, նորընտրեալ անգամաց ցանկը օրագրի մէջ պէտքէ հրատարակվի:

ԳԼՈՒԽ Դ.

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԺՈՂՈՎՈՑ ԵՒ ԽՈՐՀՐԴՈՑ

1. Պաշտօնական կանոն:

128. Իմեն ժողով և խորհուրդ պէտք է ունենայ ատենական դիւան մը, որ կը բաղկանայ ատենապետէ մը և ատենագրէ մը և պէտք է զարման քափ փոխանորդներէ գործը ժողովն իր մէջ չեն կ'ընտրէ:

Այլն անգամին երիցագունին ատենապետութեամբ և կրտսերագունին ատենագրութեան նիստ կ'ընէ և իր դիւանը կը կազմէ:

129. Երեսփոխանի պաշտօնն է՝ ատենան բանալ և դիցել, ատենան ներքին վարչութիւն տնօրինել, վիճարարութիւններն ուղղել, կանոնադրութեանց պահպանութեանը հսկել և ատենաբաններուն կարգով խօսք տալ:

130. Երեսփոխանի պաշտօնն է՝ ատենան մէջ խօսվածները գրի առնել, եղած որոշումներն ու տրված պատճառաբանութիւնները ճշդիւ նշանակել, և ատենագրութիւնը հետեւեալ ատենին ներկայացնել, և ամեն ատենին խնդիր

դիւններու ցանկը պատրաստել առաջնութեան կարգով:

131. Երեսփոխանի ու ատենագրի փոխանորդներուն պաշտօնը պիտի ըլլայ անոնց ներկայ չգտնված ատենաներուն մէջ զանոնք փոխանակել:

132. Երեսփոխանի դիւանը տարին անգամ մը կը նորոգվի և անգամներն անմիջապէս վերընտրելի են:

Ինչհանուր ժողովին դիւանը 5 տարին անգամ մը ընդհանուր ժողովին հետ կը նորոգվի:

2. Երեսփոխանի կանոն:

133. Կրօնական ու Քաղաքական ժողովներն ու Տեսուչ խորհուրդները չաբաթ անգամ մը կը գումարվին ի Ստալիարքարան որոշեալ օր մը: Երեսփոխանները կրնան ուրիշօր մը կամ օրիշ տեղիւ արտաքայ կարգի ժողով կամ խորհուրդ գումարել ստիպողական պարագայի մէջ:

Ինչհանուր ժողովին գումարվելու օրը ըլլալի միջոցով պէտք է ծանուցվի գոնէ 3 օր առաջ:

134. Երեսփոխան մեծագոյն մասի ներկայութեան նիստը անբաւական կը համարվի և խնդրի մը վրայ վերջին որոշում չկրնար տրվիլ:

135. Երեսփոխանի և ատենագրի ատենան չկրնար բացվիլ:

Երբ մեծագոյն մասը ներկայ ըլլալով՝ ատենան պետք կամ ատենագրի կը անոնց փոխանորդները ներկայ չ'ըլլան, երկրորդ անգամ ատենապետութեամբ ու կրտսերագունին ատենագրութեամբ կը բացվի ատենան:

136. Երեսփոխանին խօսք չըլինողքան և չառած ներքին չեն խօսիլ ատենան մէջ:

ԹԻՒՆ ԶՄԻՌՆԻԱ 637-638-639 640-641 ԹԻՒՆԵՐԸ:
(2) Առաջին անգամին միայն ժողովականաց և խորհրդականաց հետին լուծումը վիճակով կ'որոշվի:

ուան օրս մեծ և փոքրիկ 300 աշակերտք կը գտնուին, նմանապէս Հռիփսիմեանց դպրոցին մէջ մեծ և փոքրիկ 200 աշակերտուհիք կան։ Լսոցմէ Դ զատ Իլլիրի Բորժականացի և անգլիական գիշերօթիկ դպրոցները 20ի չափ Հայ աղայք կերթան և քաղաքիս անգլիական ու դադըական գիշերօթիկ տղէկանց դպրոցները գրեթէ նոյնչափ թուով հայկազուն ծաղկահասակ օրիորդներ կան։ որոնք լեզուադիտու թեան և բարոյական ուսմանց կըճեսին, առանց զանցընելու գհայերէնը, որուն համար յատուկ դասատուներ ունին։

Եւ յամ կըհարցընեմք մեր անկողնատէր ըն-
թերցողաց թէ այսպիսի խոհեմ հասարակութի-
ւի , այսպիսի ազգասէր հայրերը ու մայրերը և
այսպիսի ուսումնասէր մանկունք և աղջկունք
արդեօք պարտաւանոց արժանի են թէ գոյու-
թեան : Եւ ո՞ր կրմնտն պարտաւարին անհիմն
մեղադրանքը թէ Իզմիրի Հայոց հասարակու-
թիւնը անպէղ և խղճահատիկ-բէռն կըծառայէ : և
միթէ մերայիշեալ 40ի չափ արու և էգ հայկա-
զուն աշակերտները ձրիաբաժնի կըկրթուին գիշե-
րօթիկ դպրոցաց մէջ անշուշտ ոչ , այլ ընդհա-
կառան մեկնը մէկտեղ հաշուելով տարին շ00
հազար ղուռու շէն աւելի ծախք կրկայ :

100 Իսաց յայտմանէ Իղժիրի Հայոց ազգը Թաթրին
Հազար ղուռուղէն աւելի գանաղան գտաւ
Թուաց վարձք կրվճարէ Մեթրոպօլեան և Հաւրի
սիմեանց աղբային երկու վարժարանաց համար :

Եւ յիս, յիշեալ պարսաւագիրը անիրաւութիւն
կրեամբասէ և ճշմարտութեան դէմ չարաչար
կրմնդանչէ երբ կըրցուցէ թէ, Իգլիկի Հայ տիկ-
նաց մէջ է երանի՛ Լէ Ռի հայտեր Գրան-էր, Լէ Իգլիկի
հայ Տարրիչը Ռեան խան-Լեյան, պատմիչները կէս ճը
խնայեալ-ան իմաստի և կէս ճը վաճառական էն, մայրերը
անախտ և աղջկանք պճնաւոր և անորից ։ Ո՛հ, զար-
մանալի և ցաւալի է չորանասանձ կրից ներ-
դործութիւնը, որ մարդոյս աչքը սեցընելով և
միտքը պակննելով լծողութիւն որ յստակ տեսնէ
և ուղիղ դատէ ։ ապա թէ ոչ, ինչպէս կարելի
է պարսաւագիրին որ չտեսնէ հայասէր ուսում
նասէր և վէհանձն տիկին մի, Կոտտանդեան մե-
ծաշաք Հռիփսիմէ տիկինը, կրտսմբ, որ հարիւր
լիսուէ հազար զուգուէ չափ դրամիւր քսակէն
ծախք ընելով հոյակապ վարժարան մը շինել
տուած է Իգլիկի մէջ հայկադուն արջկանգ կը-
թութեանը համար ։ Ինչպէս չտեսնէր հայրե-

անոնց , իր ընթացքին երրորդ տարւոյն վերջերը
միայն քննութեան առաջարկութիւն կրնայ ընեւ
ընդհանուր ժողովին :

148. Եւր ընդ հանուր ժողովը վերաբնիւ
Թեան առաջարկու թիւեր ընդունի, վերաբնիւ
Թեան ժողով մը կրիաղմէ սա կերպով.

կրծահան և Բաղարարական ժողովներէն չորրօ-
ական հոգի, Տեսուչխորհուրդներէն երեքական
հոգի, և աստիցմէ դուրս 10 հոգի զոր ընդհա-
նուր ժողովը իր մէջէն կամ դուրսէն կ'ընտրէ,
ընդ ամէնը 30 հոգի :

149. Վերաքննութեան ժողովը ազգային Վարչութեան կողմէն եղած գիտադութիւնները միայն քննութեան տակ աւանելով, պէտք եղած փոփոխութիւնները կ'որոշէ և Պատրիարքին միջնորդութեամբ ընդհանուր ժողովին կրնեք հաւանել:

150 • Սահմանադրութեան վերաբնիւթիւնը
ազգիին համար անընդունելի է, երբ հիմնական
սկզբանց տրամադրութեանցը համաձայն չ'ըլլայ
այն սկզբանց՝ որով ապահովեալ են ազգիին իրաւ-
ունքները, իրաւունք՝ որոց վրայ, ազգէն անգամ
չ'ունի իշխանութիւն տնօրէնութեան զի մշան-
գամայն պարտքը են :

Բաշխման արդյունքի ելակետական չէ՝ ՊՕԼ :

	Թաղ.	Եկեղեցի.	Երեւոթիսանայ Թիւ
1	Պուճաբ ու	Սայր եկեղեցի	24
2	"	Ս. Յարութիւն	2
3	Կէտիկիաշա	Ս. Յովհաննէս	6
4	Էշնիքաբու	Ս. Թադէոս Բարձրորմէ	4
5	Սաւաթիւ	Ս. Դէորգ	15

խոսեր և ուսում մտական քաջատոհմիկ տիկին մի, մեծաշուք Լուսուֆեան Յուլիանէ տիկինը, կը սեմբ, որ տեսնելով Հայ ազգիկնց ուսումնասիրական մեծ եռանդը վասն գաղղկական գեղեցիկ և տիեզերական լեզուին, յօժարամիտ յանձնառու եղաւ, տարին 8000 զուգուշի չափ իւրքտակէն վճարելով, գաղղկացի դասատու մը գնելը Հռիփսիմեանց վարժարանին մէջ, ուր յիշեալ լեզուին դասատու թիւնը կը շարունակուի երկու տարիէ ի վեր: Եւ չեմք ուզեր այստեղի վարկի հայկազուն չափահաս աղջկանց և անոնց մարց համեստութեանը հակառակ վարուելով՝ անոնց ուսումնասիրութիւնը, աղիւսական զգացմունքը և անոնց վեհանձնութիւնը մասնաւոր կերպիւ յառաջ բերել, այլ կը հրաւիրեմք յիշեալ պարսաւագիրը որ օր մը՝ առանց իւր ուշաց վրայ տեսնելու իւր անձնական կրկն և անիրաւ աւտելու եւ սեւագոյն խոշորացոյցը՝ Հռիփսիմեանց դպրոցին այցելութեան երթայ, ուր պիտի տեսնէ երկու հարիւրէն աւելի աղիւս օրիորդներ, որոնք խիստ բարեկարգութեամբ նստած մեծ եռանդով կաշխատին, մէկ մասը հայկաբանութիւն սովորեալ, մէկ մասը գաղղկերէն սովորելու, միւսները գիր կը գրեն, ուրիշները թուաբանութեան կը պարապին, մէկ մասը Հայոց սփամուռութիւն և քրիստոնէական վարդապետութիւն կը սովորի, և վերջապէս շատերն ալ դանդաղան տեսակ ասղնէգործութեան կը պարապին: Եւսնց շատերուն համեստ գէմը՝ իրենց աղիւսական որտի, վեհանձն զգացմանց և իրենց խոհական մտաց հայելին է: Եւ որուն մէջ պարսաւագիրը մեծ ամօթով պիտի տեսնէ թէ չարաչար և կամովին սխալք է անիւր դրուցելով մեր աղջկանց և անախա անոնց մայրերուն:

Մեր Իզմիրի Հայ մարզիկը մինակ խոսում է՝
պան և պատանիները ինքնահաւան ու իմաստակ
էն , ինչպէս որ կըբարբառէ պարտաւայիրը ,
Իմաստակը և ինքնահաւանը կարծէմք թէ ինքը
պիտի ըլլայ որ իւր մտաց տկարութիւնը չհառ
կընալով կը յանգ գնի , ընդգէմ ճշմարտութե ,
մոլոր դատողութիւններ ընել իւր Համադգի
քաղաքակցաց վրայ և զանոնք չհանիր : Սակե
ղի Իզմիրի Հայ մողովուրդը այսօրուան օրս ի
րաւամբ կրնայ պարծենալ իւր երիտասարդաց
վրայ , որոցմէ երեւելի պաշտօնատարներ և ու
սումնականներ կրտսննմք Բարձրագոյն Պուսը
ի Պոստանդնուպոլս , ի Պէրսութ , լիլղէսան

գրիտ, ՚ի Փարիզ, Իգմբրի մէջ, և այլն՝ որոնք ի
րենց գիտնականութեամբ և կենցաղագիտութեամբ
մեծ համարում տեսցած են թէ՛ օսմանեան կառավարութեան առջև, թէ՛ օտար
ազգաց քով և թէ՛ մեր ընդհանուր ազգին առջև։
Նմանապէս ուրախ սրտիւ կրտսնենմք որ
Իգմբրի Հայ մարմուրդը մեծ փափագ էունի
վաճառականութեան, որուն մէջ բաւականապէս
յառաջացած են, և մէկ երկու գործունեայ
ու թրթռն անձինք յաջողեցան մէկ քանի մի-
լիոն զուգուշի հարստութիւն ձեռք բերել քա-
նի մի տարւածն մէջ։ Եթէ պարտագիրը կու-
ղէ, թող մեղադրէ Իգմբրի հայերը թէ «խա-
նութեան և վաճառական են, թէ արծաթ և
սկի շատ կրտսրեն և թէ հայրը իւր որդւոյն կը
խրտաէ զղէր թէ ժամ մը յառաջ աչքդ բաց
և օտակ շահեղ նայէ»։ Ահա կարծեմք թէ այս
բաներուն համար գովիլն են մեր քաղաքակից
հայերը. վասնզի տառնց դրամոց բան մը չլլար
այս աշխարհիս մէջ, նոյն խի ազգասիրութիւնը
և ուսումնասիրութիւնը անգամ առանց ստակի
գրեթէ ապարդիւն են ։

1) Պիտի Հարունակուի 2)

Եղբայրայէն կը գրէին մեզ թէ մեծարդոյ՝ Բէժ
սէեանն Սարգիս աղան, որ քանի մի ամիսէ ՚ի
վեր յիշեալ բաղաբը կը գտնուի առևտրական
գործով, տեսնելով թէ Լեռնայի մէջ ամե-
նեւն աղգալին դարձաւ մը չկայ թէ մանկանց
և թէ աղջկանց համար, սրոցմէ շտտերը օտար
աղգաց վարձարանները կերթան ՚ի վտա կրօնի
իւրեանց, մեծագէտ կը փափագէր աղգային վար-
ժարան մի հաստատուել: Եւս միջոցի Լորեա-
մանցի Սիբայէլ վարդապետն ձեռն Լեռնայիէ
գտնուելով, յօժարամիտ յանձնառու կըլլայ
Սարգիս աղային աղգօգուտ առաջարկութեանը
տարին միայն 1500 զուռուշ վարձքով: Ուստի
յիշեալ արժանապատիւ վարդապետը արդէն
վարժատուն մը բացեր է Լեռնայի մէջ ու
առու և էդ ընդամենը 30ի չափ աշակերտ ունի
որոց հայերէն և քրիստոնէական վարդապետու-
թիւն կը սովորեցնեն:

Յիշեալ 1500 զուռուշէն 500ը Վիտեկեան
Սարգիս աղան և 200ը Մամսիսցի Ղազանձեան
Յօճաննէս աղան տուեր են . իսկ մնացեալ 800
զուռուշն ալ Հալէպի ժողովրդէն ճարեր են .

—Այսինքն անցեալները խորհրդի 115 Հայ
գերդաստանաց հռոմէական կրօնը ընդունելը

	Վարկ դումարը		51
6	Սամաթիա	Ս. Յակոբ	1
	Նարբ. քաբու	Ս. Յովհաննիս	
	Մարբի գեղ	Ս. Ստեփան	
7	Մոտեֆան	Ս. Ըստուածածին	2
	Մ. Եօրկի	Ս. Ըստուածածին	
8	Թովքաբու	Ս. Նիկողոսյոս	2
9	Քարակեմբիւկ	Ս. Յ. Սիկեբերան	1
10	Պալատ	Ս. Հրաշտակապետ	15
11	Լյիւպ	Ս. Ըստուածածին	1
12	"	Ս. Եղիա	1
15	Խաղիւղ	Ս. Մանփան	15
14	Քաղմիւշաշ	Ս. Յակոբ	1
15	Իերա	Ս. Երրորդ ութին	17
	Ղալաթիա	Ս. Լուսաւորիչ	
16	Պէշիկթաշ	Ս. Ըստուածածին	10
17	Օրթաղիւղ	Ս. Ըստուածածին	14
	Քորուչէ շմէ	Ս. Խաչ	
	Հիսաբ	Ս. Սանդուխտ	
18	Միթիլիւն	Ս. Երեք մանկունք	5
	Նորդիւղ	Ս. Ըստուածածին	
	Պէցիւքաբէ	Ս. Հաւիթիմէ	
	Պէյքօղ	Ս. Նիկողոսյոս	
19	Քանտիլի	Ս. Ս. Լաքբէրց	1
20	Քուզիւնձունք Է Իճաթիէ	Ս. Լուսաւորիչ	2
21	Սկիտար	Ս. Կորապետ	8
22	Սկիտար Լիւմոաղ	Ս. Խաչ	11
		Ս. Նշան	
25	Քաղիկ զան	Ս. Թաքաւոր	1
24	Քարթալ	Ս. Նշան	1

Գ Ա Խ Ա Ռ Բ			
Աշտնորդ տեան Երեսօրհանաց	Պիճակ :	Թիւ :	Աշտնորդ տեան Երեսօրհանաց
			Պիճակ :
1 Երուսաղէմ	1	25	Ըն
2 Եգիպտոս	1	26	Տիւրիկ
3 Իերիա	1	27	Սալաթիա
Կիպրոս		28	Կիւրին
4 Տարսոն	1	29	Ընթէպ
Սիւս		30	Բիւլիս
5 Սարաշ	1	31	Շապին քարահիսար
6 Հաճին	1	32	Սեբաստիա
7 Օկլիժուն	1	33	Եւդոկիա
8 Մանսա	1	34	Սարսըվան
9 Եգեօրիա	1	35	Բմասիա
10 Տիգրանակերտ	1	36	Տրապիզոն
11 Բիւրախտան	1	37	Ճանիկ
12 Պաղտատ	1	38	Եօղլատ
13 Բաղէշ	1	39	Կեսարիա
14 Վան	3	40	Գաղատիա
15 Ալթամար	1	41	Կուալինա
16 Կարս	1	42	Օմիւռնիա
17 Մուշ	2	43	Պրուսա
18 Երզնկա	1	44	Պանտրքմա
19 Բաբերդ	1	45	Նիկոմիդիա
20 Կարին	2	46	Ռօտսթո
21 Բարբերդ	5	47	Ալեքսանդրիա
22 Երապիւր	1	48	Վալարիա
23 Բալու	1	49	Սոլտապիա
24 Գեղի	1	50	Վառնա

սուտի հանելով, կրտսեր թէ հոռիմեղաւան Հայ վարդապետները կաշատին միշտ խաբէրու մեր լուսաւորչական համագործակցութիւնը :

Կոստանդնուպոլսոյ Վրէժէ * (Օրինակ օրագիրը) իւր ցերեղ թուոյն մէջ յիշեալ յօդուածոյն պատասխանելով, այսպէս կը յարէ :

«Վրէժէ մէկը չամբաստանեմք իբրեւ խաբէրայ, այլ ընդհակառակն ներողամիտ ըլլամք ՚ի մասին հաւատոյ՝ թող տալով իւրաքանչիւրոյն որ ազատաբար կարգադրէ իւր յարաբերութիւնները (ստուծոյ հետ ինչպէս որ կուզէ, և փոխանակ երկպառակութիւնը սնուցանելու, միաբանութիւն և սէր քարոզեմք :

«Հայոց ազգը գործունէայ, մտացի ու բարեկամ է իմացական լուսաւորութեանց, և ուսումնականութիւնը խիստ զգալի յառաջդիմութիւններ կրնէ անոնց մէջ, բայց դժբաղդութեամբ երկուքի բաժնուած է ՚ի մասին հաւատոյ : Աստի գրագիտաց կրթիւններէ միաբանութիւն քարոզել իրենց համագործակցութեան մէջ վերստին զօրացուցանել փոխադարձ համակրութիւնը, բարեւէր կամքը և եղբայրական սէրը : Այս զգացմունքը երբեք պէտք չէ ին տկարանալ այնպիսի ժողովրդոց մէջ որոց օգուտները, լեզուն և սիրտը հասարակաց են» :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 8 ՓԵՏՐՈՒԱՐԻ

Օսմանեան կառավարութիւնը արժան համարեցաւ իւր պահեստի զօրքը (թէ տիֆ Ի բանակ հրաւիրել : Իրգէն հարկաւոր եղած հրամանները յուղարկուեցան ամեն նահանգաց կառավարիներուն որ խարժարոյն յրան այս տնօրէնութիւնը ՚ի գործ դնեն, որուն նպատակը ուրիշ բան չէ, բայց միայն 50 հազար հոգիի չափ աւելցնել տէրութեան գործոն զօրաբանակին վրայ : Այսօրուան օրս այս զօրաբանակին թիւը կերելի թէ 120 հազար հոգի է, ուստի կառավարութիւնը կուզէ 200 հազարի չափ ընել, որոնք հորկաւոր են զանազան քաղաքացիներէն բարեկարգութիւնը հաստատուն պահելու և տէրութեան բերդերը պահպանելու համար :

—Վսեմփաշայ (Թաւաթ) արքայ շարժու պիտի մեկնի Վաղարշապատ երթալու, ուր խարժարոյն ՚ի բան հրամանացը համաժողով, հարցաքննութիւն պիտի ընէ ՚ի վերայ ծանր ամբաստանութեանց որ կը ընեն ընդդէմ Վսեմփաշայ Լուրի փաշային, նախորդ կառավարչին յիշեալ նահանգին :

—Պաշտօններուն կրօնական երկպառակութիւնները դժբաղդաբար կը շարունակուին միշտ : Յայտնի է որ այս ժողովրդեան մէկ փոքրիկ մասը հոռիմեղաւան կրօնը ընդունեցաւ, և մէկ մեծագոյն մասն ալ, ըստ սուրբութեան մարտաքաղաքիս Իսթինի Զեյթին անգղիարէն լրագրոյն, բողոքական կրօնը ընդունելու վրայ է : Արհաստատեն թէ այս ժողովրդեան մէկ մասն ալ, որ կուզէ Յունաց կղերէն անկախ եկեղեցի մը հաստատելու արտօնութիւնը ունենալ, ազերապիւր ժը մատուցէր են վսեմփաշայ սըր Զեյթին Պիլի վէր (Նիզիկոյ դեսպանին, որ իւր բարձր միջնորդութիւնը բարեկամական կերպիւր ՚ի գործ գնէ Ի. Իրան առջև) այս հրամանը ընդունելու :

ՁԱՆԱԶԱՆ ԵՆԻՐԻՔ

Չմիւնիս, 11 Փետրուարի :

Վերջապէս երէկ հասաւ ՚ի Կոստանդնուպոլսոյ Հրահանգին վասն կազմութեան գաւառական ազգային ընդհանուր ժողովոյ, որ շատոնցմէ ՚ի վեր կը պատահէր անհամբերութեամբ : Ուստի իշխման հայազգի ժողովուրդը անյապաղ ՚ի ժողով պիտի հրաւիրուի ընտրողական ժողովները կարգադրելու համար, ըստ տրամադրութեանց ազգային Սահմանադրութեան :

—Սուրբ Լիւթուզէ մէկ սգալի լուր մը կը ծանուցանեն մեզ : Յիշեալ քաղաքին սուրբ Յակոբայ վանուց գլխաւոր միաբաններէն գերապատիւ տէր Վեորդ սրբազան եպիսկոպոսը, որ լուսարարապետ էր շատ տարիներէ ՚ի վեր և հաղիւ թէ 65 տարեկան կար, և արժանապատիւ տէր Սիւրիւզ Գարապարեկալ ձերանազարդ վարդապետը յունուարի 14ին օրը երկուքը մեկտեղ յանկարծահաւ մահուամբ վախճանեցին :

—Հալէպի տէր Երկոզյան եպիսկոպոսը՝ ընկերութեամբ քահանայի մը անցեալ շարժու իշխման անցնելով Կոստանդնուպոլսոյ գնաց :

—Յիշեալ առաջնորդը՝ իւր ուրիշ զանազան գայթակղական ընթացքէն ՚ի զատ, ժամանակէ մը ՚ի վեր գրեթէ ապստամբական վիճակի մը մէջ կը գտնուի ընդդէմ բարձրագոյն հոգեւոր իշխանութեան, վստողոյ Կոստանդնուպոլսոյ սրբազան պատրիարքը պարտաւորեցաւ արքունի հրաւանագրով մը յիշեալ մայրաքաղաքը բերել տալ զինքը : Հալէպի հայազգի խոհեմ և բարեպաշտ ժողովուրդը կը յուսայ թէ կրօնական սուրբ ժողովը յիշելով Երկոզյան եպիսկոպոսին ծանր յանցանքները և ժողովրդեան անորմէ քաշած նեղութիւնները, հոգ պիտի տան ի ուրիշ արժակաւոր հոգեւոր հովիւ մը յուղարկելով միւլթաքիէ զինքին շայ ժողովուրդը :

—Սաթիֆ իւր 4706րորդ թուովը, իշխման ազգային ժողովին դէմ ըրած մեղադրանքին պատասխանելով կրտսեր թէ, մեր գերապատիւ սրբազան (առաջնորդը) իբրեւ նախադահ ազգային ժողովին, յատկապէս կանչեց Սիւրիւս Գլխաւոր խմբագիրը և հայրաբար յորդորեց զինքը որ խոհեմութիւնը ձեռքէ ձգէ, բայց Սորին Սրբազանութեան հայրական խրատը անարժան կերպիւր ընդունուեցաւ, ուստի քաղաքիս Հայ ազգը չէր կրնար յետ այնորիկ համբերել որ իւր պատիւը և իւր ընտանեաց պատիւը մէկ երկու անխոհեմ երիտասարդաց օտոյց կոխան ըլլայ : Ուստի իւր ազգային օրինաւոր գանգաւոր յայտնեց տեղական կառավարութեանը և յանցաւորները պատժուեցան :

—Փարիզէն հասած հեռագրական լուրերը կը ծանուցանեն թէ օսմանեան փոխաւորութեանը յանձնաւոր եղող մօսիւ Միլիտան անգլանտը, իւր մէկ ապօրինաւոր գործոյն պատճառաւ, բանտարկուեց է : Սոսա ամենայնիւ այս սեղանաւորին գրամական վիճակը աղէկ է եղեր :

—Նիզիկոյ բարձրակարգ և Վաղարշ օրէնսդրական ժողովը բացուելուն բարեպատեհ առթիւ վեհափառ Վիթթորիա թագուհին և վեհափառ խարժարէն կայսրը, ըստ սովորութեան, գահախօսութիւններ ըրին : Ուրախ սրտիւ կը ծանուցանենք թէ այս վեհապետական երկու ատենախօսութիւններն ալ խաղաղասիրական են : —Հռոմի կառավարութեան և Վաղարշ կայսերական կառավարութեան մէջ եղած յարաբերութիւնները, որ արդէն շատ ցուրտ էին, վտանգաւոր կացութեան մէջ մօնելու վրայ են : Բանգի կը հաստատեն թէ Պիոս Իններորդ խիստ նամակ մը գրած է Նաբոլէոն կայսրէր ՚ի մասին իւր ընթացքին Հռոմի գործոց նկատմամբ :

—Վեհափառ Վիթթորիա թագուհւոյն հրահանգով, Վարդանէշի Նիզիկոյ հիւպատոս միտար Վարդէրթը նոյն պաշտօնիւ Թամասիս պիտի երթայ փոխանակ միտար Վրանդին :

ԾԱՆՈԹԱՆԻՒՄ

Իմաց իրարմէ հասարակութեան իւր այս օրերս 60 օր անընդմիջ պոստ օր իրարմէ, «արագիւտ Սաթիֆ իւր իշխման և իրաւունքները 1860 թիւ 20 իմ 21 : Այս պոստն ոչինչ և անվաւեր չեղանար, որովհետեւ անոր պաշտօնը որն որ իշխմանէր, արդէն վարդապետ և փեղանիս իւրաւարութեան ալ լըր արդեւոր :

ՕՍԽԱՆԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Նոր խարժարութիւն Սեյիտիէյ երթալը շարժիկաց ժամոց ըլլայ :

Իմաց կը տրուի հասարակութեանը որ անցեալ ուրբաթ օրէն սկսեալ, այսինքն 1861 փետրվարի 1էն (ըստ նոր տուածորի) շոգեկառք մը կը մեկնի իշխման Սեյիտիէյ երթալու առաւօտեան ժամ մը 7ին ըստ Գրանկոյց և ուրիշ շոգեկառք մըն ալ երեկոյեան ժամը 6ին, միջանկեալ կայարանները հանգիստելով :

Այս շոգեկառքայ Սեյիտիէյէն վերադարձը պիտի ըլլայ առաւօտեան ժամը 8ին և երեկոյեան

ժամը 7 և 10 րոպէին, միշտ ըստ Գրանկոյց : Հին կարգադրութիւն և հաստատ պիտի մնայ : Շոգեկառք մանկու տեղոյն գրատուներ, իշխման : Հրամանաւ : Վ. Փ. ՖԵՐԿԻՍԵԼԵ Գլխաւոր վերահսկող :

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ



Հալլուի Գլխաւոր վերահսկող :

Ինչպէս համար հիւանդութիւնները ազատաբար վախճան կուենան :

Վասնզի փոխանակ անոնց պատճառը ուշադրութիւնը հաստատուելու, անոնց արդիւնքը կը զննէ և փոխանակ ուղղակի անոնց արմատը ընկելու : Միայն հետեւութեանց հոգ կը տան ՚իմք : Հոլլուիէի դեղահատից ներգործութիւնը կատարելապէս այս դրութեան հակառակ կերպիւր կազմէ : Այսինքն մարմնոյն գազանի գործարաններէն և արեան շրջաբերութեանէն կարտաքսէ անտաքէր և վնասակար նիւթերը, որոնք բորբոքութեան ցաւ, ջերմ, թուրութիւն և ֆիզիքական նուազում կը պատճառեն : և այս կերպիւր հիւանդութեանց աղբիւրը ընդունելով, անոնց հետեւութիւններն ալ անբերելի կը ըլլան : Սոսա վերական դեղերը ժամանակաւոր աղբիւրութիւն մը միայն կը պատճառեն հիւանդին, իսկ այս դեղահատիցը, ընդ ահաւան յարմարաց անոր կը ընդեն զհիւանդութիւնը :

Վատաւորութիւն :

Վատաւորութիւնը սովորաբար յառաջ կուգայ ջրային անկարգութիւններէ : որոնք սրտին գործողութիւնը կը վարձաբերեն և մեր կենդանական բոլոր կարգը ամենը մեկտեղ կաւրեն : Այս պատճառով գեղահատիցը ջրային դրութիւնը (սիւթեմ) կը վերահաստատեն թէ և աւելուած ըլլայ, առողջութիւնը և միտքը կը զօրացնեն այնպիսի գեղահատից մէջ ուր միւս ամեն դեղերը բան մը չեն կրնան ընել :

Երգի հիւանդութիւն և մարմն :

Երգի (գառա ճիւղ) հիւանդութիւնները և մարմնը շատ անգամ ամենաառաջին ցաւէր կը պատճառեն : Որպիսի անձինք արդեօք այս ցաւով վնասուեալ ըլլալով, չեն գիտեր բժշկուելու : միջոցները, որոնք իրենց մօտը կը գտնուին : Եթէ այս դեղահատիցէն քանի մը հասարակութեան ըլլային, ինչպէս որ նախ նախաժեռ է իւրաքանչիւր ծանուցաբեր մէջ, շուտով պիտի աղատուէին իրենց ցաւներէն : Հիւանդութիւններէն շատերը, միջոց երեւակայ է մարդոց մարմնը, կրնան ըլլալ ժամանակաւոր մէջ ընդունել այս դեղահատիցը գործածելով : ինչպէս որ ապացուցուեցաւ բազմաթիւ օրինակներով :

Վտանգաւոր ժամանակ :

Եթէ կանայք հոգ չեն ընտ ժամանակին գործուն տանելու այն ժամեր և վնասակար հիւանդութեանց երկուր անոնց ընթացքը գաղտնի է : իրենց ստուգութիւնը և կեանքը իսկ անոնցմէ կը բռնուի կրտաւոր իբրեւ հեղիւք մը : Այս ամեն վտանգաւոր ատիկայ հաստատուն գործունը Հոլլուիէի դեղահատիցն է և այս դեղութիւնը կանայք կրնան իրենց վտանգաւոր ժամանակներ (սաթ քրիթի) ապահովութեամբ անցընել և իրենց առողջութիւնը վնասելու : Այս դեղահատիցը օգտակար են նաև կանանց վերաբերեալ ամեն հիւանդութեանց և ինչպէս թէ անց օր կը պատահի կտտարեալ հասակին մէջ :

Չղացաւորութիւն և տկարամտութիւն :

Հոլլուիէ անձինք զոհ կը ըլլան այս տեսակ սեւամտութեան (իրօքսոմի) : որ անոնց աչաց տալէ հրէջ մը ձև կառուել, և չեն գիտեր իրենց ցաւերը թեթեւեղելու հարկաւոր գործունը, այն ինչ պարզիս դեղահատից մէջ Հոլլուիէի դեղահատիցը շատ անգամ մեծ ներգործութիւններ ունենան : Ուստի շարունակ գործունութիւնը այս պատճառով դեղահատիցի հարկաւոր գործունութեամբ ՚ի կերակուր, իսկայն կը բժշկէ ամենամօտ զգայքից որպիսի և հիւանդ ըլլան : Ուրիշին ջրային դրութիւնը (սիւթեմ) կը զօրացնուի և հիւանդը գաղտնի իւր ստուգութիւնը կը շարունայ : Այս դեղահատիցը յատկապէս խիստ օգտակար են վասն յետագայ հիւանդութեանց :

Նիզիկոյ կը ընդ (ֆիլիւր Ենթերմիթեմ) : Հնարգեւութիւն (աւթմ) : Մաղձային ջերմը (ֆիլիւր պիլեօ) : Խիթ (քոլիք) : Ցաւք որովայնի : Թուրութիւն և նուազում ուժոյ : Օձիկ (եղանձր) : Կանանց ամսական օրինաց անկարգութիւնը : Ուստացաւորութիւն (նիզիկոյ) : Գլխացաւութիւն : Բորբոքութեան : Գալլուի (սարլը) : Երկաւման թեւեղութիւն : Տեւատեսութիւն (մայար) : Զոլացաւորութիւն (րիւմաթիւ) : Միզարգեւութիւն : Պարանոցի ցաւ : Բարկամ խիճ միզանոցի : Ուռուցք (դիւմիւր) : Կեղք (իւլեւ) : Ամէն տեսակ որդերը (սողուն) : Արդիւտեան ատիւներ :

Այս դեղահատիցը, որ կը ընտան զանոնք գտնուող անձնական վերակացութեամբ, անոր ընդհանուր գործարանաց մէջ կը ծախուին ՚ի Նիւսոն Սեյիտի կողմէ թաղը թիւ 244 : և ՚ի Նոր Իրգ Մայիտէ Լէն թաղ թիւ 80 : Իսկ ուրիշ երկրները, իւր գործակալաց քով կը գտնուին : որոց անունները հետեւեալներն են : Իշխման Իւթար Ենթերմի, և մօսիւ Բոլիւրի, որ Փարմոսի արմատ անուն դեղահատիցի խանութիւն տերն է : Կ. Պօլիս : Ա. Բամար և Փ. Տեւատեսաւ : Ա. ստեղծիկ : Փ. Բեթիլի, Բամարի Վաղարշ, Բիւս կը ընդ Տ. Սիւրիւր, Սաթիֆ և Սիւրի, Վարդէշ Ենթերմի և Վաղարշ :

Խմբագիր տէր լրագրոյ

Դ. Փաշայեան :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԴԱՆՈՒՄՈՅ ԱՐԱՐԱՆԵԱՆ